## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 26.03.2018Թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

« 13 » դեկտեմբեր 2018թ.

ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Հ. Գևորգյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՖԻԼՅՈՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Պ. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 26.03.2018թ. կնքված N «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.8 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել 16 օրացուցային օրով և կատարման վերջնաժամկետ սահմանել 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

### 2. Այլ պայմաններ

2.1. 26.03.2018թ կնքված N «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին | «Ֆիլյոր» ՍՊԸ |
| ք. Երևան, Կոմիտաս 49/2 | ք. Երևան, Ահարոնյան 2/5 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013404018 | Հ/Հ 1660001324710100 |
| ՀՎՀՀ 00454227 | ՀՎՀՀ՝ 00106835 |
| Գլխավոր քարտուղարի ժ/պ Հ. Գևորգյան՝ | Տնօրեն՝ Պ. Սահակյան |
| /ստորագրություն/ Կ.Տ. | /ստորագրություն/ Կ.Տ. |